


ՏԵՍԻԼ ԿՈԼՈՍՐՈՍԻ



րկրքին աւուրք անցեալք յուսակրտուրք և տրրտում,
Պշուցեալք 'ի ծովն անսահման՝ զինուորք ճօճեալ սուր յաջում,
Աղաղակեն առ Կոլոսորոս: Ալէ, երկիր և կամ մահ,
Այլ հանդարտ և նըւագաց երկնից 'ի լուր սկայն անազ,
Ի հանճար իւր ապստտան՝ առէ ցնոսա անվեհեր:
Բարեկամք, օր մի ևս զեռ:

Օ՛ր մի ևս, ո՞վ բարեկամք, ընդ հուպ ծագէ առաւօտ.
Հուսկ յետին նըւագ թողէք յարեւածայրս անաղօտ
Վայելել աչաց իմոց, ահա կամի լուսանալ.
Վաղիւ իմ՝ են ապագայք, վաղիւ զըտից նոր աշխարհ,
Վաղիւ ոչ ևս մեռանիմ, և պարծանացըս գրուակոն
Լիցի 'նձ աշխարհ մի որբան:

Արևուն ոչ իսկ և իսկ շիջանի լոյս նորահրատ,
Օ՛ն և ինձ ներեսցի ածել զընթացս իմ յաւարտ,
Ո՛հ, ոչ կարեմ՝ մեռանել, ինձ ակն ունի երկիր նոր,
Երկիր ոչ բացակայ, զո՞գ առ երի մօտաւոր,
Վրկայեն ինձ ամենայն՝ որ շուրջ գինև և բնութիւն
Եւ իմ իսկ սիրտ ըզգայուն:

Վրկայէ և երկին տեսեամբ իւրով պատարուն,
Նուազ երգոց քաղցրաձայնից՝ համաշխարհի օրհնութիւն,
Ուտի վրէպ զըտանի մին յարարութեան նըւագաց,
Վրկայէ ինձ և որ արդ յանգ հանէ զգործ իւր Աստուած,
Եւ որ զմի ևեթ յիջից մերկացաւ մեզ 'ի գրոյն՝
Ուր կայ գրոյմեալ իւր անուն:

Օ՛ն և օն, թէ արար այլ երկինս, և գոյ այլ աշխարհ.
Միթէ՞ զուր 'ի նանիւր ելոյց ճրագունս անհամար
Ի գումբեթս ովկիանու 'ի գաչացու և զանխուլ.
Կորիցնն անտես յայաց այս ճառագայթք գեղանշոյլ,
Ո՛չ յանքոյթ պատրաստարանս գիւթականաց աշխարհաց
Հար գայս խորանս գեղապանծ:

Ո՞վ աշխարհ մեզ նախագգաց, և քեզ թերևս մեք հանգոյն,
Զորոյ գեղ քո չնաշխարհիկ հայիմ՝ 'ի ցուրս արփենւոյն,
Ի հիւրընկալ գիրկըս քո ժողովեա զմեզ խանդակաթ.
Ի մտացօնս դարձուցցեն ակունքդ ըզվիշտըս անհաս
Որք զըտին ըզմեզ յոյժ՝ զերդ բարեբաստ բազմական
Ի հեշտալի խրրախճան:

Երևիս իմն հանգունակ գերդ մինչ անուրջք բոցավառ
Իբրև ձայն երկնառաք մըտեալ յոգիս իմ կայտառ,
Եւ յայս իմ՝ 'ի հեռուստ ըզքո պարգեալ անդաստան՝
Ինձ ըզգեղ քո կուսական ցուցանէին յանդիման.
Եւ կոհակ յորդաշուր ահեղակերպ քոց գետոց
Խաղայր յաւազ ոսկեգօծ:

Ի պահուճանս Էւրոպայ և Ափրիկոյ և Հընդկաց
 Զարդարեալ ճոխացուցից զափունըս քո զերպպանծ .
 Բարբառոյ ձայնիդ զըրունըս մեր զըտցի խելամուտ,
 Եւ կըրօնք աստուածապաշտ՝ սոյն այս հրեշտակ բարեգութ՝
 Որ յերկնից իջանէ գայ 'ի սփոփանս աշխարհի,
 Զօդեսցէ զմեզ յինքն 'ի մի:

Քա՛մլ լերուք բարեկամք. ինձ այդ զուարթուն աստղ և բաստ,
 Լուսաւոր առնէ գհաննար իմ և ուղղէ զառապաստ.
 Կըրօնք ինձ առաջնորդ եղեալ ածին աստանօր,
 Ինքնին կըրօնք զիս առեալ վարեն յաշխարհս Հեռաւոր,
 Եւ ընդ մեզ ծովամուխ նաւեալ 'ի դաշտն անկայուն
 Խընդրենն աշխարհ զոյգ մերոյն:

Մտախոհ յափունս և թափառ
 Աչք սիրոյ՝ նախանձու,
 Նըշմարէի յայլ գաւառ
 'Նդ երկին անսմայ և պայծառ
 Ըգճառագայթս արևու:

Ասեմ. « Լուսոյ աղբերակ,
 » Որոյ բըղխումն ոչ նուազի,
 » Աբբայդ բնութեան բովանդակ,
 » Արփիդ, զոր թանձըր վրիպակ
 » Նընջել ասէ զիշերի.

» Տայր որ ընդ քեզ ինձ սլանալ
 » Քան ըզկոհակս անբազդոյն.
 » Եւ զխորանդունդ ծովս հատեալ
 » Վնալ երեւել յաշխարհ այլ,
 » Զոր ճանաչեմք ես և դուն »:

Հոգիս արբտում և 'ի սուգ
 Կամէր խուսել 'ի մարմնոյս.
 Այլ ոտքս աւաղ և եղուկ
 Զի առ լոյսն այն խուսափուկ
 Զկարէր վարգել յափրն միս:

Եւ ահա, ո՛վ պանչիլեաց.
 Արտասուաթոր ինձ հանգոյն,
 Կին մի տեսլեամք հրեշտակի,
 Ոյր բարբառք ինձ լլսելի
 Յայտնէին ցաւս ըզգայուն:

Ասէր. « Ես մօր հանգունակ
 » Որբեցի զմեծ զայս աշխարհ.
 » Ինև փըրկեալք անհամար
 » Արդ ատեան զիմ յիշատակ:

 » Տեսի ես պիղծ զըլխապատ
 » Պատուեալ քան զիմ ըզսուրբ փայտ.
 » Տեսի գՀեյլէնս ես գունատ
 » Յոռս այլազգւոյ դիտապատ:

» Եւ յելանել 'ի ձըւոյն
 » Անգղ՝ ահա կայ զըժընդակ
 » Լափել զարդիւնս անուշակ
 » Զոր պահէ դեռ իմ հին բոյն:

 » Ո՛վ գու մոգեալք 'ի նըւադ
 » Մատանց երկնից՝ մեծ հաննար
 » Որ գիտացեր զայլ աշխարհ
 » Լինել 'ի քաղցր յայն դաշնակ .

 » Գու որ 'ի ծովդ յայդ ամայ
 » Տեսեր զժըմիտ արփենոյն
 » Ի յիւր կառաց պաղպաջուն
 » Առ այլ աշխարհ Հեռակայ.

 » Թո՛ղ զայդ ափունս ապիրատ.
 » Պանդուխտ ծիծանն զուգարար
 » Սլասցուք ոտիցս 'ի դադար
 » Յափունս՝ յերկնից խանդակաթ »:

Ասաց, և նդ ծով ծաղկանեմ՝
 Տեսի շըքնաղ ես կըզդիս,
 Ծըփեալս զոցցես տարաղէմ
 Ի դիւթական յայն ափնէն՝
 Ընդ սիրատարփ ընդ ալիս:

Տեսի աշխարհ ծաղկայի,
 Պայծառ արփի գերակայ,
 Մոռացայ գտուն հայրենի,
 Եւ զդաշտըս քո, իտալի,
 Եւ զիմ որբոց ըզվենուս:

Թէ հայէիս 'ի զուարթունս՝
 Երևէին խընդալից
 Ի գլուխ վաշտուցըն հրարունս,
 Զի յառել հուսկ յայն ափունս
 Զարքայութիւն՝ թըւէր ինձ:

Այսպէս խօսէր Կոյումբոս, և ծով ըզբանն 'ի միտ առ,
 Զեփուք գեղերայինք բարձեալ 'ի թեւ դայն բարբառ
 Բզհրաշալին սրբոտակաթ՝ տարան յափունս մերձակայ,
 Ամեհի Կպանիացին եթող ըզգէնսըն զբժնեայ,
 Եւ անմուռնչ առ ոտիքն, և 'նդ արտասունն հիազարհուր՝
 Սպասէր երկրին և աւուր:

Օրինակ զայս 'ի մաքնչել ալեաց 'ի սարս սմայիս՝
 Մերկանայր մըտեմաց իւրոց Պղատոն ըզգաղտնիս
 Աշխարհի պանչելոյ կորուսելոյ 'ի յանդունդս.
 Այսգունակ և Որփեա զհանճար կոչեալ 'ի թիկունս,
 Ի նըւազըս դիւթականս աղէյարմար քընարի
 Նուանէր զվագերս անտառի:

Ի Իւրրեօյլ

ԱՍՏՂ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Ո՛վ սուրհանդակ հեռաւոր, երկոյեան աստղ անգոյն,
 Արեւմտեան քօղերէն հանած ճակատըդ պայծառ,
 Կապուտապեղ պալատէդ՝ յաստեղազարդն ի կամար՝
 Զի՞նչ դիտես մէջ դաշտերուն:

Ահա մըբրիկն հեռանայ, ահա հողմունք դադրեր են.
 Անտառն անգամ սարսուզին ցախ թուփերուն վրայ ողբայ.
 Յայգաթիթեռն սկեթեւ թեթեւթուիչ սըբանայ

Անուշաբոյր մարգերէն:

Ո՛հ, ի՞նչ փընտոնս երկրիս վերայ որ հանգչի:
 Սակայն տեսնեմ՝ որ իջած դէպ ի գագաթ լեռներուն՝
 Քաղցրածըպիտ կը փախչիս, մելամաղձիկ սիրելի,
 Եւ, վա՛չ, պիտի նըւաղի նայուածքըդ քո գողդոջուն:
 Աստղ՝ որ իջնես յամբաքայլ դաշարագեղ բըլրան վրայ,
 Գիշերուան մուժ հանդերձին տըխուր արտօսք արծաթի,
 Դու որ դիտես ի հեռուն գեղջուկ հովիւն որ գընայ,
 Մի՞նչ քայլ առ քայլ բազմաթիւ նախիրն իրեն հետեի, —
 Աստղ՝ առանձնակ ո՛ւր կ'երթաս գիշերուան մէջ անսահման,
 Ի՞նչ. ծովափին մօտ փընտոնէս եղեգանց մէջ քեզ խըշտեակ:
 Այդքան սիրուն ո՛ւր կ'երթաս, արդ ի պահու լըռութեան,
 Մարգարտանման գըլըրիլ յըստակ ջըրոցն ի յատակ:
 Ո՛հ, աստղդ գու գեղեցիկ, եթէ մեռնիլ քեզ հարկ է,
 Եւ եթէ դուրսդ ի ծովուն պիտի սուզէ շէկ մազեր,
 Նախ քան թողուլ մեզ միակ, դեռ վայրկեան մ'այլ գու կանգնէ՛.—
 Աստղդ սիրոյ, կապուտակ երկնից ծոցէն մի՛ իջներ:

Ա. Դը Միշուկ